

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԱՀԱԿՑԱՆ ԳԵՎՈՐԳ ԱՐԹՈՒՐԻ

**ՊՈՍՏՄՈՂԵՌՆԻԶՄԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔ ԳՐՈՂ ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒՔԻ
ԱՐՁԱԿՈՒՄ**

**Ժ.01.07- «Արտասահմանյան գրականություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
ՄԵԼՔՈՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՄԻ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
ԷԴՈՅԱՆ ՀԵՆՐԻԿ ԱՆՏՈՆԻ

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
ՏՈՆԻԿՅԱՆ ՍՈՆԱ ԱԼԲԵՐՏԻ

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2016 թ. մայիսի 27-ին, ժամը 12:30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայ և արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում: Հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. ապրիլի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու

Ս. Ա. Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ներկայումս հասարակական-քաղաքական կյանքում, արվեստում, գրականության մեջ տեղի ունեցող տարբեր երևույթներ ընդունված է անվանել պոստմոդեռնիստական, և նույնիսկ տարածված է «պոստմոդեռնիստական վիճակ» եզրույթը: Ժամանակակից թուրքական գրականությունը որոշակի տեղ ունի համաշխարհային պոստմոդեռնիստական գրականության ծիրում: Դրանում որոշիչ է արձակագիր Օրհան Փամուքի դերակատարումը: 2006 թվականին գրականության Նոբելյան մրցանակի արժանացած Օրհան Փամուքի արձակն էական դեր է խաղացել թուրքական գրականության մեջ պոստմոդեռնիզմի ուղղության ձևավորման և զարգացման գործում:

Ատենախոսությունը նվիրված է Օրհան Փամուքի արձակի քննությանը, և փորձ է արվել ներկայացնել թուրքական պոստմոդեռնիզմի ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները: Փամուքի արձակում պոստմոդեռնիստական մեթոդները միախլուսված են արևելյան որոշ իրողությունների և առանձնահատկությունների հետ, որոնք թույլ են տվել հեղինակին տեղայնացնել պոստմոդեռնիստական հնարքները և ձևավորել յուրահատուկ «արևելյան» կամ «թուրքական» պոստմոդեռնիստական գրականություն, որի մեջ ներառվել են միջնադարյան իսլամական միստիցիզմը, Թուրքիայի հասարակական-քաղաքական իրադարձությունները, արևելյան առասպելները և այլն: Սակայն պետք է նկատել, որ այդ ամենի առանցքում կարևոր դեր ունեն փնտրտուքը և Արևելք-Արևմուտք բախման, հաճախ այլաբանական, երանգավորումները: Փամուքի արձակում տեղ գտած Արևելք-Արևմուտք բախման խնդիրը, ըստ էության, Թուրքիա-Եվրոպա/Եվրամիություն հարաբերությունների այլաբանական պատկերումն է, ներկայացված են Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության գործընթացի քաղաքական, հասարակական, մշակութային ընկալումները, կողմ և դեմ տեսակետներն ու արևելյան և արևմտյան աշխարհայացքների բախումը: Փամուքի արձակում միախլուսված են արևմտյան և արևելյան գրական ավանդույթները՝ քաղաքական իրադարձություններն այլաբանորեն պատկերելու ձգտումով:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Օրհան Փամուքի արձակի ուսումնասիրությունը կարևոր է 20-րդ դարի վերջի և 21-րդ դարակզրի թուրք գրականության հիմնական միտումները, գերակա ուղղությունները, թեմատիկ առանձնահատկությունները պատկերացնելու տեսանկյունից: Կարելի է

ասել, որ Փամուքի արձակը գաղափարականացված և քաղաքականացված է, սակայն ոչ բացահայտ կերպով, ու դրանով հանդերձ, համաշխարհային գրական զարգացումների կիզակետում է, ինչի վկայությունն է նրա գրքերի շուրջ 65 օտար լեզուներով թարգմանված լինելու և ամբողջ աշխարհում 13 միլիոն (2 միլիոնը վաճառվել է Թուրքիայում, 11 միլիոնը՝ տարբեր երկրներում) օրինակ վաճառվելու հանգամանքը:

Չնայած, նախ, «թուրքական պոստմոդեռնիզմ» կոչված երևույթի, և ապա Փամուքի՝ որպես այդ ուղղության լիդերի, վերաբերյալ շարունակվող բանավեճերին, այնուամենայնիվ, կարելի է փաստել, որ մինչ օրս նա միակ թուրք գրողն է, որն ունի համաշխարհային նման ճանաչում: Ավելորդ չենք համարում նկատել, որ Փամուքի կենսագրության ու ճանաչվածության մեջ ամեննին երկրորդական դեր չունի Հայոց ցեղասպանության վերաբերյալ գրողի արած հայտարարությունը: Փաստ է նաև, որ Օրհան Փամուքը և իր ստեղծագործությունները որոշիչ ու որոշակի դեր ունեն Թուրքիայի Հանրապետության միջազգային իմիջի ձևավորման գործում: Ուստի, հաշվի առնելով վերոշարադրյալ հանգամանքները՝ նրա արձակի ուսումնասիրությունը ձեռք է բերում գիտական բազմակողմանի արդիականություն:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է ցույց տալ թուրքական արձակում պոստմոդեռնիզմի կայացման և զարգացման նախադրյալներն ու առանձնահատկությունները, ինչպես նաև դիտարկել այն թեմատիկ ու ոճային խճանկարը, որն այդ արձակը դարձրել է համաշխարհային ճանաչում ունեցող: Աշխատանքում առանձնացվել են հետևյալ խնդիրները.

1. Ներկայացնել թուրքական արձակում եղած հիմնական միտումները 1980-ականներին, ինչպես նաև դրան նախորդած փուլի որոշ առանձնահատկություններ:
2. Անդրադառնալ թուրքական գրականության մեջ մոդեռնիստական հոսանքներին և հատկապես այն զարգացումներին, որոնք նպաստավոր հող են նախապատրաստել պոստմոդեռնիզմի կայացման և զարգացման համար:
3. Քննել Փամուքի արձակում պոստմոդեռնիստական մեթոդների, հնարքների ու տարրերի ներառումը և տեղայնացումը, արևելյան մոտիվների և միստիկ իսլամական փիլիսոփայական ուսմունքների ադապտացումը:

4. Ցույց տալ թուրքական պոստմոդեռնիզմի զարգացման ուղին ու մեթոդները հենց Փամուքի արձակի օրինակով, որպես այդ ամենի կարևոր ցուցիչ:
5. Վերլուծել քաղաքական խնդիրների վերաբերյալ Փամուքի գրական ու քաղաքացիական դիրքորոշումները, ինչպես նաև անհատի ինքնության փնտրտուքի տարատեսակ (փիլիսոփայական, այլաբանական, ֆատալիստական) դրսևորումները:
6. Ի ցույց դնել Փամուքի արժարժած գեղարվեստական իրողությունների քաղաքական և պատմական զուգահեռներն ու հիմքերը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Սույն ատենախոսությունը հայաստանյան իրականության մեջ թուրքական պոստմոդեռնիզմի և Օրհան Փամուքի արձակի տարբեր շրջաններին նվիրված առաջին համապարփակ ուսումնասիրությունն է: Աշխատանքում ներկայացվում են ինչպես թուրքական ուշ մոդեռնիզմի, այնպես էլ վաղ պոստմոդեռնիզմի ձևավորման փուլերը, կայացման և զարգացման նախադրյալները: Ատենախոսության մեջ քննության են ենթարկվում Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուքի տարբեր տարիների վեպերը և դրանցում պոստմոդեռնիստական մեթոդների առանձնահատկությունները: Բացի այդ, ներկայացվում են փամուքյան արձակի թեմատիկ, ոճական յուրահատկությունները, այլաբանությունների՝ արևելյան միստիկ փիլիսոփայական հենքը: Աշխատանքում նաև վեր են հանվել Փամուքի ինչպես գրական, այնպես էլ քաղաքացիական անդրադարձները Թուրքիայում տարբեր ազգերի և, առաջին հերթին՝ հայերի նկատմամբ եղած բռնությունների և հալածանքների վերաբերյալ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Ատենախոսության մեջ հիմնականում կիրառվել է համաժամանակյա և տարաժամանակյա համեմատական-տիպաբանական մեթոդը, որոշակի տեղ է տրված նաև պատմահամեմատական մեթոդին: Բացի այդ, կիրառվել են արևելյան միստիկ փիլիսոփայական տեքստերում պարունակվող այլաբանական զուգահեռների ընկալման տեսությունները, ինչպես նաև առանձին սուֆիական ուղղության՝ հուրուֆիականության (տառապաշտության)

ընկալման գաղափարները, որոնք պոստմոդեռնիզմի մեջ տեղ են գտել «մարդը որպես տառ» և «աշխարհը որպես տեքստ» ընկալումներով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը և Փամուքի առանձին վեպերի վերլուծությունը կարող են օգտակար լինել ՀՀ բուհերում ժամանակակից թուրքական գրականության դասավանդման, ինչպես նաև 20-րդ դարի վերջի և 21-րդ դարի սկզբի գրականությանը վերաբերող դասագրքերի, ուսումնական ձեռնարկների ստեղծման համար: Ատենախոսության որոշակի դրույթներ կարող են նպաստել թուրքական պոստմոդեռնիստական գրականության շուրջ կատարվող ուսումնասիրությունների, ինչպես նաև Փամուքի արձակի այլ ուղղվածությունները հետազոտելու գործին: Ատենախոսության թեմային վերաբերող հոդվածներն արդեն կիրառվում են ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնում նորագույն շրջանի թուրք գրականության դասավանդման գործընթացում և ընդգրկված են ամփոփիչ քննությունների հարցաշարերում՝ որպես հայալեզու պարտադիր գրականություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի ընդլայնված նիստում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում, հանրապետական/ուսանողական գիտաժողովներում, ինչպես նաև արևելյան գրականություններին նվիրված ֆակուլտետային սեմինարներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1980-ականների սկզբից ընդհուպ մինչև 2016 թվականն ընկած ժամանակահատվածը. ընտրված ժամանակի մեջ քննության ենք առել Օրհան Փամուքի առաջին վեպը՝ այն բնութագրելով որպես «նախապոստմոդեռնիստական» և հեղինակի վերջին վեպը, որը տպագրվել է 2016-ի հունվարի սկզբին: Այս ընտրությունը թույլ է տվել տեսնել Փամուքի և նրա ստեղծագործությամբ՝ նաև թուրքական պոստմոդեռնիզմի զարգացման ուղին, որդեգրած մեթոդները,

արծարծած թեմաները և հիմնական միտումները: Նկատենք նաև, որ ժամանակագրական սկզբնակետը ոչ միայն Փամուքի առաջին վեպն է, այլ հանգամանքը, որ հենց 1980-ականներն են համարվում թուրքական պոստմոդեռնիզմի սկիզբ, երբ հրատարակվում են առավել կամ նվազ պոստմոդեռնիստական բնույթ ունեցող ստեղծագործություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունը կատարվել է թուրքերեն աղբյուրների, ինչպես նաև հայերեն, ռուսերեն, թուրքերեն ու անգլերեն հետազոտությունների, աշխատությունների, հրապարակումների հիման վրա:

Թուրքական գրականության նկատմամբ ավանդաբար բավական ակտիվ խորհրդային թուրքագիտության ավանդույթներն այսօր իրենց շարունակությունն են գտնում ռուսաստանյան թուրքագիտության ոլորտում: Եվ կարելի է ասել, որ ռուսաստանյան թուրքագետ-գրականագետներն իրենց ուշադրության կենտրոնում են պահում նաև պոստմոդեռնիստական ուղղության զարգացման խնդիրը թուրքական ժամանակակից գրականության մեջ, և հրապարակում կան բավական արժեքավոր ու խորքային վերլուծություններ: Դրանցից հատկապես կարևորել ենք Մ. Բեյլենկովայի¹, Ա. Սուլեյմանովայի², Ա. Օրբազցովի աշխատություններն ու հոդվածները, որոնց առանձին դրույթների հետ ունենք որոշակի

¹ Репенкова М., От реализма к постмодернизму, Москва, 2008; Репенкова М., Вращающиеся зеркала: Постмодернизм в литературе Турции, Москва, 2010; Репенкова М., Орхан Памук и его роман “Снег”, Вопросы тюркской филологии, вып. VII, Материалы Дмитриевских чтений, Москва, 2007, с. 154-162.

² Сулейманова А., Постмодернизм в современной турецкой литературе // Джандосова З., Завидовская Е., Кухтина М., Ляхович А., Петрова М., Суворов М., Сулейманова А., Челнокова А., Постмодернизм в литературах Азии и Африки. Очерки. - СПб., 2010. с. 233-259; Образцов А., Сулейманова А., Модернизм в турецкой литературе // Модернизм в литературах Азии и Африки. Очерки. – СПб., 2014. с. 94-152; Образцов А., Сулейманова А., Постмодернистский ответ Орхана Памука на модернистский вызов Огуза Атая // Актуальные вопросы тюркологических исследований. Сб. статей к 75-летию В.Г. Гузева. – СПб., 2014. с. 165-183; Suleymanova A., Postmodernist Roman ve Orhan Pamuk'un Eserlerine Yansımaları üzerine // Dil Dergisi. Language Journal. – Ankara: Ankara Üniversitesi Basımevi, Sayı: 118 Ocak – Şubat 2003. – s. 53-58; Сулейманова А., Петербург Ф. М. Достоевского и Стамбул О. Памука // Восток – Россия – Петербург. – СПб., 2003, с. 67-74; Сулейманова А., Предпосылки формирования образа постмодернистского героя в турецкой литературе XX века // Вопросы тюркской филологии, вып. 6: материалы Дмитриев. чтений. – М.: Акад. гуманитар. исслед., 2006, с. 173-177.

տարածայնություններ, սակայն, ընդհանուր առմամբ, դրանք լավ պատկերացում են տալիս այդ ուղղության կայացման և զարգացման վերաբերյալ: Բնականաբար, թուրքական գրականագիտությունը նույնպես իր ուշադրության կենտրոնում է պահում պոստմոդեռնիզմի ուղղությունը և դրա հետ կապված զարգացումները, սակայն սկզբնական շրջանում՝ 1980-1990-ականներին թուրք մասնագետները դրան վերաբերվում էին առավելապես քննադատաբար և թերահավատ³: Նկատենք, որ թուրք պոստմոդեռնիստ գրողների ստեղծագործություններից ամենաշատն ուշադրության են արժանացել հենց Փամուքի վեպերը, իսկ 2006 թ. Նոբելյան մրցանակի արժանանալուց հետո այդ հետաքրքրությունը բազմապատկվել է: Փամուքի հատկապես «Մն գիրքը» վեպն իր վրա է բևեռել բազմաթիվ թուրք և արտասահմանցի մասնագետների ուշադրությունը⁴: Պետք է փաստել, որ Օրհան Փամուքի և նրա ստեղծագործությունների վերաբերյալ կա իրոք ահռելի գրականություն աշխարհի տարբեր լեզուներով, և սույն ուսումնասիրությունը կատարելիս մենք բախվել ենք այդ հսկայածավալ նյութը դասակարգելու, առավել խորքային և մեր ատենախոսության համար կարևորություն ներկայացնող վերլուծություններն առանձնացնելու բարդ գործին: Օրհան Փամուքի պաշտոնական համացանցային կայքը⁵ նույնպես համարվում է տեղեկությունների կարևոր աղբյուր, որտեղ առկա են գրողի և նրա ստեղծագործությունների վերաբերյալ հարյուրավոր գրախոսություններ, նրա հարցազրույցները, կենսագրականը և այլն:

20-րդ դարի թուրքական գրականության տարբեր խնդիրները խորքային վերլուծության են ենթարկված խորհրդային թուրքագետ-գրականագետների աշխատություններում, որոնցից հատկապես կարևորել ենք Ս. Ուսուրգաուրիի⁶, Լ. Ալկանայի⁷, Ռ. Ֆիշի⁸, Ա. Բաբանի⁹, Լ.

³ Aytaç G., Çağdaş Türk Romanları Üzerine İncelemeler, Ankara, 1990.

⁴ Kara Kitap Üzerine Yazılar (derleyen Esen N.), İstanbul, 3. Baskı, 2013.

⁵ www.orhanpamuk.net

⁶ Утургаури С., Турецкая проза 60-70-х годов: основные тенденции развития, Москва, 1982.

⁷ Алькаева Л., Очерки по истории турецкой литературы (1908-1939), Москва, 1959; Алькаева Л., Эволюция образа главного героя турецкой литературы конца XIX–начала XX века, XXV Международный конгресс востоковедов (доклады делегации СССР), Москва, 1960; Алькаева Л., Из истории турецкого романа 20-50-е годы XX века, Москва, 1975; Алькаева Л., Бабаев А., Турецкая литература: краткий очерк, Москва, 1967; Алькаева Л., Стамбул в турецкой художественной литературе, Турецкий сборник, Москва, 1958, стр. 139-155.

⁸ Фиш Р., Писатели Турции: книги и судьбы, Москва, 1963.

⁹ Бабаев А., Очерки современной турецкой литературы, Москва, 1959.

Ստարոստովի¹⁰, Ն. Այզենշտեյնի¹¹ հետազոտությունները: Թուրքական միջնադարյան սուֆիական գրականության տարբեր ասպեկտներ բազմակողմանի քննության են ենթարկված խորհրդային գրականագետ Ս. Բարովինայի և ուրիշների կոլեկտիվ մենագրության մեջ¹²:

20-րդ դարի երկրորդ կեսի և 21-րդ դարի թուրք գրականության վերաբերյալ թուրք մասնագետների աշխատություններից հատկապես օգտակար են եղել Շ. Քուրդաքուլի քառահատորյակը¹³, թուրքական վեպի ժանրի զարգացման վերաբերյալ դասական համարվող Բ. Մորանի եռահատոր աշխատությունը¹⁴, թուրք գրականության պատմությանը վերաբերող ակադեմիական հրատարակության հատկապես 4-րդ հատորը¹⁵ և Ֆ. Նաջիի¹⁶, Թ. Հալմանի հետազոտությունները¹⁷: Օրհան Փամուքի արձակի և թուրքական պոստմոդեռնիզմի քննությանն են վերաբերվում Ն. Էսենի¹⁸, Յ. Էջնիթի¹⁹ աշխատությունները:

Հայ հեղինակներից Օրհան Փամուքի գրական ստեղծագործություններին անդրադարձ կա Ա. Մարտիրոսյանի²⁰ թեկնածուական ատենախոսության մեջ, որտեղ քննության է ենթարկվել հեղինակի «Լոին տունը» վեպը: Փամուքի «Սև գիրքը» վեպին և Հայոց ցեղասպանության վերաբերյալ արած հայտարարությանն է անդրադարձել Ա. Ավետիսյանը²¹: Հայոց ցեղասպանության թեմային թուրքական

¹⁰ Старостов Л., Заметки о современной турецкой прозе, Проблемы становления реализма в литературах востока (материалы дискуссии), Москва, 1964.

¹¹ Айзенштейн Н., Из истории турецкого реализма: заметки о турецкой прозе (70-е годы XIX в. – 30-е годы XX в.), Москва, 1968.

¹² Литература Востока в новейшее время, Москва, 1977.

¹³ Kurdakul Ş., Çağdaş Türk Edebiyatı, İstanbul, 1994, c. 1-4.

¹⁴ Moran B., Türk Romanına Eleştirel Bir Bakış, İstanbul, 2002, c. 1-3.

¹⁵ Türk Edebiyatı Tarihi, İstanbul, 2. Baskı, 2000.

¹⁶ Naci F., 100 Soruda Türkiye’de Roman ve Toplumsal Değişme, İstanbul, 1981; Naci F., Yüzyılın Yüz Romanı, İstanbul, 2002.

¹⁷ Halman T., A Millennium of Turkish Literature (A Concise History), Ankara, 2009, Second Edition.

¹⁸ Esen N., “Orhan Pamuk’un Romanlarında Anlatım Çeşitliği”, Varlık, sayı 1123, Nisan 2001, s. 11-14. Esen N., Modern Türk Edebiyatı Üzerine Okumalar, İstanbul, 3-üncü Baskı, 2012.

¹⁹ Ecevit Y., Türk Romanında Postmodernist Açılımlar, İstanbul, 2011, 7. Baskı.

²⁰ Մարտիրոսյան Ա., Թուրքական քաղաքական վեպի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները (XX դարի 70-80-ական թթ.), թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2015:

²¹ Ավետիսյան Ա., Օրհան Փամուքը և իր «Սև գիրքը», Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2006, հ. IV, էջ 166-183; Աւետիսեան Ա., Օրհան Փամուքի «Թուրքիայում 30,000 քուրդ է սպանուել, 1 միլիոն

պոստմոդեռնիստական գրականության անդրադարձին է նվիրված Ռ. Մելքոնյանի²² հոդվածը:

Թուրքական միջնադարյան սուֆիական գրականությանն է նվիրված խորհրդային գրականագետների կոլեկտիվ մենագրությունը²³, իսկ այլ (այդ թվում և հայ) գրականությունների հետ միասին ուղղության անչլություններին է անդրադառնում Ա. Սաֆարյանը²⁴, որի հոդվածները մեծապես նպաստել են ժամանակակից թուրքական պոստմոդեռնիստական գրականության մեջ առկա սուֆիական կոդավորումները և զուգահեռներն ավելի լավ պատկերացնելուն ու գնահատելուն: 20-րդ դարի թուրքական գրականության հիմնական միտումներն ընկալելու համար օգտակար են եղել հայ թուրքագետներ Ռ. Մելքոնյանի²⁵, Ս. Գալշոյանի²⁶, Ա. Մարտիրոսյանի²⁷, Է. Խաչատրյանի²⁸ հոդվածները:

Թուրքական հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների խորքային վերլուծություններ են

էլ հայ» արտայայտութեան յարուցած փոթորիկը, Հայկազեան հայագիտական հանդես, Պեյրուօ, 2015, հատոր ԼԵ (35), էջ 803-818:

²² Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության թեման թուրքական հետմոդեռնիստական արձակում (Էլիֆ Շաֆաքի «Հայրը և ապօրինի զավակը» վեպը), Բանբեր Երևանի համալսարանի (հասարակական գիտություններ, բանասիրություն), Երևան, 2012, թիվ 138.2, էջ 25-33:

²³ Литература Востока в средние века, Москва, 1970.

²⁴ Սաֆարյան Ալ., Գրիգոր Նարեկացու ու սուֆի բանաստեղծների ստեղծագործություններում ավանդական պատկերների «աղապատացման» մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1993, թիվ 2, էջ 103-113; Սաֆարյան Ալ., Մտորումներ Գրիգոր Նարեկացու և սուֆի բանաստեղծների բարոյագիտական հայացքների մասին, Իրան-Նամե, Երևան, 1993, թիվ 1, էջ 29-30; Safaryan A., Melikyan G., Apology of Sufism in Divan by Yunus Emre, XXVI International Congress of Assian and North African Studies, Book of Abstracts of ICANAS-2000, Montreal, 2000, p. 60.

²⁵ Մելքոնյան Ռ., Թուրք գրող Ֆաքիր Բայրուրթը (գրական դիմանկարի փորձ), Լոր-դար, Երևան, 2004, թիվ 4, էջ 117-124; Մելքոնյան Ռ., «Գյուղական ինստիտուտները» և գրական կյանքը Թուրքիայում (1940-50-ական թթ.) Կանթեղ, Երևան, 2005, թիվ 1 (22), էջ 139-144; Մելքոնյան Ռ., 20-րդ դարի թուրքական գրականության «անդրադարձը» Հայոց ցեղասպանության թեմային, Իրան-Նամե. արևելագիտական հանդես, Երևան, 2010-2011, հատոր 42-43, էջ 67-71:

²⁶ Գալշոյան Ս., Դասակարգերի փոխհարաբերության խնդիրը Յաշար Քեմալի «Թիթեղը» վիպակում, Արևելագիտության հարցեր, Երևան, 2012, հ. 7, էջ 342-362:

²⁷ Մարտիրոսյան Ա., Թուրքական քաղաքական վեպի թեմատիկ առանձնահատկությունների շուրջ (1980-ական թվականներ), Արևելագիտության հարցեր, Երևան, 2012, հ. 7, էջ 371-378:

²⁸ Խաչատրյան Է., Օրհան Քեմալ գրական դիմանկարի փորձ, Արևելագիտության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու) VII, Երևան, 2012, էջ 363-370:

արված հայ թուրքագետներ Ա. Դումանյանի²⁹, Վ. Տեր-Մաթևոսյանի³⁰ աշխատություններում և հոդվածներում, որոնք մեծապես նպաստել են Թուրքիայում ռազմական հեղաշրջումների և քաղաքական իսլամի պատճառահետևանքային կապն ընկալելուն: Մա կարևոր է հատկապես այն համատեքստում, որ Փամուքի վեպերում հիշյալ թեմաները շատ են հանդիպում և հանդիսանում են, ըստ էության, առանցքային, և դրանց գեղարվեստական գունավորումն ընկալելու համար կարևոր է պատմագիտական խորքի պատկերացումը:

Օրհան Փամուքի քաղաքացիական պահվածքը, գրական և քաղաքական հայացքները հասկանալու տեսանկյունից կարևորել ենք նաև գրողի բազմաթիվ հարցազրույցները ճանաչված հասարակական-քաղաքական, գրական ամսագրերին և լրատվամիջոցներին:

Ատենախոսության համար օգտակար են եղել գրականագիտական և տեսական աշխատություններ, որոնցից հարկ ենք համարում առանձնացնել Էդ. Ջրբաշյանի³¹, Մ. Բախտինի³², Վ. Խալիզևի³³ մեծարժեք մենագրությունները: Պոստմոդեռնիզմի շուրջ տեսական աշխատություններից նշենք Ի. Իլինի³⁴, Ն. Կիրեևայի³⁵ մենագրությունները:

Սույն ատենախոսության մեջ քննության ենք ենթարկել Օրհան Փամուքի հետևյալ վեպերը. «Ջնդեր» բեյը և որդիները», որը հեղինակի առաջին վեպն է և որում նկատելի են «նախապոստմոդեռնիզմի» տարրեր, առաջին ամբողջովին պոստմոդեռնիստական վեպը՝ «Սև գիրքը», «Ձյունը»՝ որպես քաղաքական ուղղվածություն ունեցող ստեղծագործություն, «Ստամբուլ. քաղաքը և հիշողությունները» հուշագրությունը, որը կարևոր է Փամուքի գրական հայացքների ձևավորումն ընկալելու տեսանկյունից, և 2016 թ.-ին լույս տեսած «Կարմիր Մագերով Կինը»:

²⁹ Դումանյան Ա., Թուրքիայի 1980 թ. ռազմական հեղաշրջման պատճառների շուրջ, Մերձավոր Արևելք III, Երևան, 2006, էջ 51-55; Դումանյան Ա., Աջակողմյան ծայրահեղականների ահաբեկչությունը Թուրքիայում 1980 թվականի ռազմական հեղաշրջման նախօրեին, Մերձավոր Արևելք II, Երևան, 2005, էջ 84-87:

³⁰ Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001 թթ.), Երևան, 2008:

³¹ Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, 1980, Ջրբաշյան Էդ., Գրականագիտության ներածություն, Երևան, 1996:

³² Бахтин М., Вопросы литературы и эстетики: Исследования разных лет, Москва, 1975.

³³ Хализев В., Теория литературы, Москва, 1999.

³⁴ Ильин И., Постструктурализм. Деконструктивизм. Постмодернизм, Москва, 1996.

³⁵ Киреева Н., Постмодернизм в зарубежной литературе, Москва, 1996.

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացված են աշխատանքի հիմնական նպատակները և խնդիրները, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, ինչպես նաև օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

20-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՁԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊՈՍՏՄՈՂԵՌՆԻՋՄԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Այս գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից, որոնցից առաջինում՝ ***Թուրքական արձակը 20-րդ դարի երկրորդ կեսին. ընդհանուր ակնարկ***, ներկայացված են անցյալ դարի կեսերից մինչև 1980-ականները թուրքական արձակում տեղի ունեցած հիմնական զարգացումները, թեմատիկ և ժանրային առանձնահատկությունները, գերակայող ու նոր միտումները, անկումային կամ ճգնաժամային երևույթները: Հատկապես ուշադրություն է դարձված շատ գրականագետների կողմից որպես թուրքական մոդեռնիզմ բնորոշվող ստեղծագործությունների թեմատիկ ընդգրկմանը և դրանց հեղինակների գաղափարական ու տեսական կողմնորոշումներին: Ներկայացված են նաև դեռ գերակա համարվող և նոր հասարակական-քաղաքական զարգացումների արդյունքում ի հայտ եկած հոսանքներն ու թեմատիկ ուղղությունները: Խոսվում է ռեալիզմի դիրքերի ամրացման, սոցիալական խնդիրներին անդրադարձող ստեղծագործություններում հոգեբանական շեշտադրումների ավելացման, անձի, հերոսի անհատական ներքին աշխարհին էլ ավելի սևեռվելու մասին: Բացի այդ, գրականություն են մտնում նոր կերպարներ, որոնք պայմանավորված էին Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող զարգացումներով: Հիմնական հոսանքներից առանձանում են քաղաքական վեպը, որը կապված էր ռազմական հեղաշրջումների, բռնությունների աճի հետ, ինչպես նաև միգրանտական գրականությունը, որն էլ հետևանք էր 1960-ականներից դեպի Եվրոպա թուրքերի արտագաղթի հետ: Սակայն

տարատեսակ զարգացումների մեջ, թեկուզ ոչ շատ գերակա և տեսանելի, ուրվագծվում է մարդու օտարվածությանը, ներքին փնտրտուքին, խորթությանը, ինքնության ճգնաժամին վերաբերող պատմվածքների, վիպակների ի հայտ գալը, որը հավաքական առումով կոչեցին «ճգնաժամի գրականություն»: Շատ մասնագետների կարծիքով, այդ հոսանքը և «մոգական ռեալիզմը» դարձան թուրքական մոդեռնիստական արձակի առավել հավաքական դրսևորումները, որոնք թե՛ ոճական, թե՛ ձևի, թեմաների բովանդակության և գլխավոր գաղափարի տեսանկյունից տարբերվում էին այդ ժամանակ գերիշխող սոցիալական, գյուղագրական և քաղաքական-փաստագրական ստեղծագործություններից: Պետք է նկատել նաև, որ այդ ամենի վրա որոշակի ազդեցություն էին ունենում արևմտյան գրականության տարբեր օրինակների թարգմանումն ու տարածումը Թուրքիայում, և այդ տարիներին թուրքական արձակում սկսում են նկատվել տարրեր, որոնք արևմտյան երկրների մոդեռնիստական գրականության նմանակումն էին կամ տեղայնացումը: Ի դեպ, այդ զարգացումը բնորոշ էր նաև թուրքական պոեզիային, որում առաջ եկավ մոդեռնիստական հոսանք, որն անվանվեց «երկրորդ նորը», որի մասն էր կազմում նաև դադաիստական հոսանքը, որը թեև քիչ, բայց, այնուամենայնիվ, տեղ գտավ այդ տարիների գրական զարգացումներում:

Երկրորդ ենթագլխում՝ ***Պոստմոդեռնիզմի ուղղության ձևավորման ընթացքն ու որոշ առանձնահատկությունները***, ներկայացված են այն գրական զարգացումները, որոնք տեղի էին ունենում Թուրքիայում 1970-ականների վերջին - 1980-ականների սկզբին և համարվում են պոստմոդեռնիզմի ձևավորման հիմքեր: Անդրադարձ է արվում գրական գերակա թեմաներից շեղվող որոշ հեղինակների և ստեղծագործությունների: Ներկայացված են ընդհանրապես պոստմոդեռնիզմի ուղղության վերաբերյալ տեսական որոշ հայացքներ և այդ նոր ուղղությունը ձևակերպելու փորձեր: Պայմանավորված պոստմոդեռնիզմի բնույթով՝ բավական բարդ է տալ հստակ սահմանումներ, և այս ենթագլխում առավելապես վեր են հանվել այն ընդհանուր միտումները, հաճախ կրկնվող մոտիվները և ոճերը, որոնք, կարծես թե, ձեռք են բերում որոշակի սկզբունքի կարգավիճակ: Մասնավորապես, խոսվում է միջտեքստայնության, դետեկտիվ և պատմական համատեքստի ու այդ ուղղության ստեղծագործություններում ամենից շատ հանդիպող փնտրտուքի վերաբերյալ: Գալով թուրքական պոստմոդեռնիզմին պետք է ասել, որ դրանում ակնհայտ է եվրոպական և ամերիկյան երկրների գրականությունների ազդեցությունը: Սակայն ուշագրավ է այն փաստը, որ թուրքական գրականության մեջ այդ ուղղության ծիրում հաջողության են կարողացել հասնել այն հեղինակները, ովքեր վերապատրաստվել կամ սովորել են արևմտյան երկրներում ու ԱՄՆ-ում, յուրացրել այդ ուղղության որոշակի

տեսություններ և դրանք կարողացել տեղայնացնել արևելյան իրականության մեջ՝ ներառելով արևելյան մոտիվներ, առասպելներ, իսլամական միսսիցիզմ, պատմություն և արդի խնդիրներ: Մեր կարծիքով, «թուրքական պոստմոդեռնիզմ» ինքնուրույն հոսանք անվանելը պետք է անել վերապահությամբ, և մի շարք գրականագետների այն կարծիքը, թե «թուրքական պոստմոդեռնիզմ» ուրույն է և ունի իր զարգացման ուղին, այնքան էլ ճշգրիտ չէ: Թուրքական պոստմոդեռնիզմի վրա ակնհայտ են համաշխարհային գրականության հստակ ազդեցությունը, թեմաների, ոճի, անգամ պուժեների և մոտիվների նմանությունը կամ նույնությունը, սակայն թուրքական յուրահատկությունը կապված է այն հանգամանքի հետ, որ հեղինակները, և հատկապես Փամուքը, կարողացել են տալ այդ ամենի «թուրքացված» տարբերակն ընդհանուր Արևելքի պատմության և փիլիսոփայության ուսմունքների համապատկերում: Մրանով չենք փորձում թերագնահատել «թուրքական պոստմոդեռնիզմը», սակայն այդ ձևակերպումը մենք ընկալում ենք որպես համաշխարհային պոստմոդեռնիզմի տեղայնացված տարբերակ՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով: Թուրք պոստմոդեռնիստներին ստեղծագործելու բավական լայն թեմատիկ և ոճական դաշտ են ապահովել ոչ միայն միջնադարյան արևելյան կրոնական և դավանանքային ուղղություններն՝ իրենց յուրահատուկ փիլիսոփայությամբ, այլև ժամանակակից Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքի տարբեր իրողություններ, որոնց մեջ, մեր կարծիքով, գերակայում է պատմական խորք ունեցող արևմտականացման կամ դեպի Եվրոպա ձգտելու օսմանյան-թուրքական ձգտումը, որը ներկայումս ձևակերպված է որպես Եվրամիությանը Թուրքիայի անդամակցելու գործընթաց: Կարող ենք ասել, որ այս թեման իր այլաբանական դրսևորումներով էլ հենց կազմում է թուրքական և հատկապես փամուքյան պոստմոդեռնիզմի գլխավոր առանցքը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒՔԸ ԵՎ ՆՐԱ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՅԱԿԸ. «ՆԱԽԱՊՈՍՏՄՈՂԵՌՆԻԶՄԻՑ» ԴԵՌԻ «ԴԱՍԱԿԱՆ ՊՈՍՏՄՈՂԵՌՆԻԶՄ»

Այս գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջինում՝ *Օրհան Փամուք, գրական և հասարակական ճանաչման ուղին*, ներկայացվում են գրողի կենսագրության այն կարևոր դրվագները և հանգրվանները, որոնք մեծ դեր են խաղացել համաշխարհային ճանաչում

ունեցող կերպարի ձևավորման գործում: Ուշադրություն է դարձվել նրա գրական և գեղագիտական հայացքների ձևավորման համար կենցաղային, գաղափարական կարևոր բաղադրիչներին, ինչպիսիք են ստամբուլյան բարեկեցիկ ընտանիքից սերելը, արևմտյան դպրոցում սովորելը, մասնագիտական նախապատվությունների ընտրությունը: Ինչպես ցանկացած գրողի, այնպես էլ Փամուքի համար կենսագրական որոշ դրվագներ դարձել են նաև գրական ձևակերպում ստացած տարրեր, սակայն Փամուքի պարագայում այդ ամենը փոքր-ինչ այլ գունավորում է ստանում. կիրառելով պոստմոդեռնիզմի առանձնահատկությունները՝ Փամուքը հաճախ միտումնավոր մեկտեղում է գրական հերոսի և իրական անձի՝ հեղինակի մոտեցումները, մտածելակերպը, կենսագրական առանձնահատկությունները և երբեմն գրեթե ջնջում իրականի ու գեղարվեստականի սահմանները՝ մտնելով պլոտի մեջ մեկ որպես իրական Օրհան Փամուք, մեկ որպես Օրհան անունով, սակայն այլ գրող: Եվ այս համատեքստում Փամուքի կենսագրության որոշակի դրվագները ձեռք են բերում ոչ միայն զուտ ճանաչողական, այլև գրական նշանակություն, որ թույլ է տալիս ավելի դիպուկ վերլուծություններ անել և գտնել պոստմոդեռնիստական ասեկիքին տանող բանալիները: Մյուս կողմից՝ ներկայացված են Նոբելյան մրցանակի դափնեկրի քաղաքացիական պահվածքի կարևոր դրվագները, որոնք լրացրել և ամբողջական են դարձրել նրա կերպարը: Այս խնդիրն առավել կարևոր է հայերիս համար և հայ հասարակության մեջ ստեղծված որոշ թյուրընկալումներին պատասխան տալու տեսանկյունից: Խնդիրն այն է, որ Օրհան Փամուքը 2005 թ. հանդես էր եկել սկանդալային հայտարարությամբ, որում ասել էր, թե Թուրքիայում 1 միլիոն հայ և 30 հազար քուրդ է սպանվել: Սա, բնականաբար, մեծ իրարանցում էր առաջացրել ամբողջ աշխարհում, հատկապես Հայաստանում: Սակայն շատերը դա պայմանավորում են Նոբելյան մրցանակի արժանանալու չգրված օրենքներով, համաձայն որոնց՝ գրողը պետք է նաև քաղաքացիական խիզախություն դրսևորի, իսկ Թուրքիայի պարագայում դա առաջին հերթին պետք է վերաբերի մարդու իրավունքների խախտմանը և էթնիկ խտրականությանը: Այդ հայտարարությունից հետո թյուր պատկերացում է ստեղծվել, թե իբր Փամուքը ստեղծագործում է Հայոց ցեղասպանության թեմայով. իրականում որոշ վեպերում կան լոկ այդ խնդրին վերաբերող հպանցիկ ակնարկներ:

Այս գլխի երկրորդ *Օրհան Փամուքի «Ջնդեր բերը և որդիները» վեպը. պոստմոդեռնիզմի առաջին նախանշանները* ենթագլխում քննության է ենթարկվում Փամուքի առաջին վեպը, որը հրատարակվել է 1982 թ. անմիջապես արժանանալով Թուրքիայում ամենահեղինակավոր՝ Օրհան Քեմալի անվան վեպի մրցանակին: Այս սովորաբաժավ վեպը, գրականագետների կարծիքով, *ընտանեկան վեպ է՝* Թոմաս Մաննի

«Բուտենբրոկների» նմանությամբ: Սկսնակ գրողի համար բավական հաջողված այս ստեղծագործության մեջ արդեն իսկ ակնհայտ են Փամուքի հետագա գրական ուղու կողմնորոշումները. մասնավորապես՝ շատ տեղ է տրվում այնպիսի հնարքներին, թեմաներին, որոնք հատուկ էին լինելու պոստմոդեռնիստական ուղղությանը: Այնտեղ հանդիպում ենք սեփական ինքնության փնտրտուքի մեջ գտնվող տարբեր կերպարների, որոնց խնդիրները երբեմն իրարից անկախ են պատկերված, և այնուամենայնիվ, գտնվում են փնտրտուքի մի ընդհանուր մթնոլորտում: Այդ ամենն ասես համադրվում է իրատեսական և փոքր-ինչ կենցաղային տարրերի հետ՝ բարեկեցիկ խավի կենցաղի նկարագրություններ, կենցաղի կարևորամար աչքի ընկնող հերոսների առատություն: Վեպում ներկայացվում են միևնույն ընտանիքի երեք սերունդներ, և ուշագրավ է, որ այդ երեքում էլ հանդիպում են ինքնության փնտրտուքի, միայնակության, չհասկացվածության խնդիրներով տառապող կերպարներ: Հատկապես երկրորդ և երրորդ սերնդի մեջ հաճախ են գերիշխում «Ո՛վ եմ ես» հարցը և այդ հարցի պատասխանի փնտրտուքը: Չնայած գրականագետների մեծագույն մասն այս վեպը համարում է առավելապես ռեալիստական մեթոդով շարադրված՝ էլիտար խավի խնդիրներին վերաբերող վեպ, սակայն, մեր կարծիքով, դա կարելի է համարել նաև «նախապոստմոդեռնիստական», քանի որ սյուժետային գծի բաղկացուցիչ և հիմնական մասերից մեկը ճգնաժամում հայտնված, շրջապատն իրեն խորթ համարող անձն է, նրա՝ երբեմն կործանմամբ ավարտվող պատմությունը: Ի դեպ, կործանումը ոչ միշտ է պատկերված լոկ ֆիզիկական առումով. երբեմն հերոսը կորցնում է ինքնությունը և ձեռք բերում հենց իր գաղափարների համար նախկինում անընդունելի կերպար: Օրինակ՝ առաջադեմ, արևմտյան գրականությամբ դաստիարակված կերպարից դառնալով ծայրահեղ ազգայնամուլ և թուրքական ծայրահեղականության ջատագով, ով սկսում է ժխտել այն ամենը, ինչը թուրքական չէ, այդ թվում և նախկինում իր երկրպագած արևմտյան կամ դասական արվեստը: «Ջևդեթ բեյը և որդիները» վեպում կան նաև պոստմոդեռնիզմի այլ՝ վառ արտահայտված տարրեր, որոնցից են միջտեքստայնությունը, իրոնիան: Դեպքերի համար ընտրված է 1905-ից մինչև 1970 թթ. ընկած ժամանակահատվածը, և, ընդ որում, դրանք բաժանված են երեք մասի, որոնք անմիջականորեն կապված են պատմական դեպքերի հետ, այսինքն՝ պատմականությունը ևս կա՝ 1905 թ., հեղափոխական գաղափարների մուտք Օսմանյան կայսրություն, 1938 թ. Աթաթուրքի մահ, 1970 թ. հերթական ռազմական միջամտության նախաշեմ:

Երրորդ ենթագլուխը՝ *«Քատիկ միջավայրն ու միստիկական փնտրտուքը «Մն գիրքը» վեպում*, նվիրված է Օրհան Փամուքի, թերևս, առաջին լիովին պոստմոդեռնիստական վեպին: Չնայած մինչ այդ էլ

հրատարակված «Մպիտակ ամբողջ» վեպը համարվում է Փամուքի առաջին պոստմոդեռնիստական ստեղծագործությունը, սակայն այս վեպում արդեն հեղինակն ավելի ազատ և վարպետորեն է կիրառում պոստմոդեռնիստական հնարքները, ավելի հմուտ ստեղծում քառտիկ պատկեր, ներառում տեքստեր, մտցնում դետեկտիվ ուղղվածություն, և այդ ամենի առանցքում կրկին փնտրտուքն է, ընդ որում այն հետզհետե վերածվում է միատիկ գունավորում ստացած փնտրտուքի: Վեպի հիմնական պլոթեն կառուցված է գլխավոր հերոսի փնտրտուքի՝ հետազոծով, հերոսը՝ Գալիփը, փնտրում է հանկարծակի կորած իր կնոջը՝ Ռյուային (անունը թարգմանաբար նշանակում է երագ): Ի դեպ, Փամուքը որոշակի ուշադրություն է դարձնում մարդկանց անունների սիմվոլիկային՝ փորձելով դրա տակ որոշ այլաբանական երանգներ ներկայացնել: Ռյուան փախել էր իր հորեղբոր որդու՝ հայտնի լրագրող և պունակագիր Ջելալի հետ, և հերոսը սկսում է փնտրել նրանց երկուսին էլ: Մակայն այդ փնտրելն արագ վերածվում է միստիկ սուֆիական փնտրտուքի, և այստեղ Փամուքը պլոթետային գծի մեջ է մտցնում առնվազն երկու սուֆիական դրվագ: Առաջինը կապված է անունների հետ. Ջելալը խորհրդանշում է միջնադարյան պարսիկ սուֆի գրող Ջելալեդդին Ռումիին (1207-1273), որն ապրել է Փոքր Ասիայում թյուրքական տիրապետությունում, իսկ Գալիփը 18-րդ դարի թուրք սուֆի գրող Չելիս Գալիփին (1757-1798) է խորհրդանշում, որի համար Ջելալեդդին Ռումին ուսուցիչ է: Այսինքն՝ աշակերտը փնտրում է իր ուսուցչին իդեալին և կնոջը իր երագին: Փամուքն առաջ է բերում հետևյալ պոստմոդեռնիստական ամենահաճախ հանդիպող լուծումը և մեթոդը. որպեսզի հերոսը գտնի իրեն՝ պետք է դառնա մեկ ուրիշը, և միայն այդ միջոցով է հնարավոր գտնել սեփական ինքնությունը: Ուստի, Գալիփը դառնում է իր ավագ եղբայր Ջելալը, սկսում է նրա պես հագնվել, նրա տանը բնակվել և, ի վերջո, նրա փոխարեն գրել թերթում: Վեպի վերջում դետեկտիվ եզրափակումն ամենին էլ կարևոր չէ. և՛ Ջելալին, և՛ Ռյուային գտնում են սպանված, սակայն իրականում հերոսը՝ Գալիփը, գտել էր իր փնտրածը, իր ինքնությունը: Վեպը մեծ ճանաչում է բերել հեղինակին և դարձել միջազգային գրականագիտական շրջանակների քննարկման առարկա: Հարկ է հատուկ շեշտել, որ «Սև գիրքը» վեպի «հերոսներից» է նաև քաղաքը՝ Ստամբուլը, որպես «մելանխոլիկ տարածք»: Կարող ենք ասել, որ արդեն «Սև գիրքը» վեպով Օրհան Փամուքը ոչ թե հայտ ներկայացրեց, այլ իր հաստատուն տեղը գրավեց համաշխարհային պոստմոդեռնիստ հեղինակների շարքում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՆՏՐՏՈՒՔԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՃԱԿԱՍԱԳՐԱՎԱՇՏԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Այս գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցից առաջինում՝ ***Հասարակական-քաղաքական իրադարձությունների պոստմոդեռնիստական պատկերումը Օրեան Փամուքի «Ձյուն» վեպում,*** ներկայացվում է, հենց գրողի ձևակերպմամբ՝ իր «առաջին և միակ քաղաքական վեպը», որտեղ արտացոլված են 1990-ականներին Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքի, թերևս, ամենասուրբազային թեմաները, սակայն կրկին պատմական ավելի լայն անդրադարձների համապատկերում: Վեպի աշխարհագրական տարածքը մեծ մասամբ Կարսն է, և մի կարճ դրվագ տեղի է ունենում Ֆրանկֆուրտում: Այս վեպում ևս պոստմոդեռնիստական տարրերն արդեն ավելի մեծ վարպետությամբ են կիրառվում: Կարս քաղաքը կրկին հանդես է գալիս «հերոսի» դերում և այն առանձնահատկությամբ, որ քաղաքը և ձյունը միահյուսված են իրար. վեպի ողջ ընթացքում անդադար ձյուն է տեղում: Վեպում դեպքերն ընթանում են 3-4 օրվա ընթացքում, երբ Գերմանիայում բնակվող նախկին ձախակողմյան ակտիվիստ, բանաստեղծ Կան հանկարծ որոշում է այցելել Կարս որպես լրագրող, և այնտեղ հետաքննել տեղի ունեցող աղջիկների ինքնասպանությունները, որոնց պատճառը քաղաքական իսլամի խորհրդանիշն էր՝ կանացի գլխաշորը և կրթական հաստատություններում դա կրելու արգելքը: Այս վեպում ևս կա հստակ արտացոլված դետեկտիվ գիծ, սակայն պատահականությունների և հանկարծակիության տարրերը նույնպես բավական ընդգծված են: Բացի այդ, առկա է նաև դիպաշարի սիրային ուղղվածություն, երբ հերոսը հասկանում է, որ ինքը Կարս է եկել իր նախկին համակուրսեցի գեղեցկուհի Իփեքի հետ ամուսնանալու համար, որը բաժանվել էր ամուսնուց: Փամուքի այս գործում ևս տեսնում ենք Արևելք-Արևմուտք բախման այլաբանական պատկերումը:

Այս գլխի երկրորդ ենթագլխում՝ ***Օրեան Փամուքի պոստմոդեռնիստական հուշագրությունը՝ Ստամբուլ, քաղաքը և հուշերը,*** անդրադարձ է կատարված Փամուքի մինչ այս հրատարակված միակ հուշագրական ժանրի գրքին, որտեղ հեղինակը ներկայացնում է իր կյանքի դրվագները մինչև 22 տարեկան հասակը՝ դեպքերի հիմնական առանցքում ունենալով Ստամբուլը: Այսինքն՝ նախ այստեղ Ստամբուլը կրկին շարունակում է մնալ «հերոս», և երկրորդ մենք տեսնում ենք Փամուքի գրական աշխարհայացքի ձևավորման կարևոր հենքերը: Հուշագրությունը, սակայն, կրկին լի է պոստմոդեռնիստական տարրերով. ներկայացված են հեղինակի անձնական մտորումները, որոնք իրենց բնույթով այնքան էլ չեն

տարբերվում վեպերի հերոսների մտորումներից: Կարելի է ենթադրել, որ Փամուքն այս հուշագրությամբ ի ցույց է դնում, որ հենց ինքն էլ գտնվում է «պոստմոդեռնիստական վիճակում», և դա դարձել է իր իսկ կենսակերպը: Այս ենթագլխում նաև ուշադրություն է դարձված Փամուքի հուշագրության մեջ առկա հետաքրքիր փաստերին, որոնք վերաբերում են թուրքական իշխանությունների կողմից ստամբուլաբնակ ազգային փոքրամասնությունների, հիմնականում՝ հայերի, հույների և հրեաների հանդեպ իրականացված պետական հալածանքի քաղաքականության կոնկրետ դրվագներին: Դրանց մեջ առանձնացված են 1955 թ. սեպտեմբերի 6-7-ին տեղի ունեցած ջարդարարությունները, որոնց զոհ են գնացել հույները և հայերը: Մեր կարծիքով, այս փաստերը Փամուքի ամբողջ արձակում, թերևս, թուրքական պետական խտրական և ցեղասպան քաղաքականության ամենացայտուն օրինակներն են, այլ ոչ թե հայտնի հարցագրույցից առաջ եկած թյուր պատկերացումները:

Երրորդ՝ ***Ճակատագրապաշտության և առասպելների համադրումը Օրհան Փամուքի «Կարմիր Մազերով Կինը» վեպում,*** ենթագլխում որոշակիորեն արծարծվում է նաև ճակատագրապաշտության ֆատալիզմի թեման, իսկ Փամուքի պարագայում դա կրկին ներկայացվում է Ես-ի փնտրտուքի, այդ ճանապարհին ապրած ինքնության խառնաշփոթի, երբեմն՝ կորստի համապատկերում: Իր տարբեր վեպերում Փամուքն ակնարկում կամ հպանցիկ անդրադառնում է նաև որոշ առասպելների, ապերի և էպիկական պատումների՝ դրանով, մի կողմից, կիրառելով միջտեքստայնության, մյուս կողմից՝ այլաբանության տարրեր:

Փամուքի նոր վեպը, որը հրատարակվել է 2016 թ. սկզբին, վերնագրված է «Կարմիր Մազերով Կինը» և նվիրված է ճակատագրապաշտությամբ պարուրված ինքնության փնտրտուքի թեմային, սակայն այստեղ հիշյալ խնդիրը տրված է արևելյան դասական ու հանրահայտ առասպելի՝ «Ռոստամ և Զոհրապի» ու էպիկական պատումի տարրեր պարունակող արևմտյան ողբերգության՝ Սոֆոկլեսի «Էդիպ արքայի» միախառնումով և դրանցում առկա մոտիվների փոխակերպմամբ: Պոստմոդեռնիստական մեթոդների կիրառմամբ բարդ սարդոստայնում են միավորված տարբեր իրողություններ, գաղափարներ և երևույթներ, իրականում երբեմն պարզ, երբեմն ենթատեքստում ու այլաբանորեն պատկերված է կրկին Արևելքի ու Արևմուտքի բախման խնդիրը: Փամուքի նոր վեպում պատահականությունների շղթան և ռեալ իրականությունը շաղկապված են միմյանց, սակայն առանցքում ունեն արևելյան առասպելի և արևմտյան ողբերգության սյուժետային հստակ գծերն ու մոտիվները: Բացի այդ, ինչպես բոլոր պոստմոդեռնիստական վեպերում, այստեղ ևս կա դետեկտիվ ուղղվածություն. տանանայակներ առաջ գործած մեղքը հանգիստ չի տալիս հերոսին և նրա մեջ ստեղծում է

Ֆաստալիստական տրամադրություններ ու որոշակի վախ: Օրհան Փամուքի նոր վեպում պահպանված են փամուքյան և պոստմոդեռնիստական որոշ մեթոդներ ու առանձնահատկություններ, սակայն, ի համեմատություն գրողի նախորդ գրքերի, այստեղ ավելի քիչ են հանդիպում քառտիկ և հաճախ՝ արհեստական տպավորություն թողնող պատկերումները:

Ատենախոսության վերջում ընդհանրացվում է աշխատանքը, ներկայացվում են հետևյալ հիմնական *եզրակացությունները*.

1. 20-րդ դարի կեսերին թուրքական գրականության մեջ դրսևորվել են մոդեռնիզմի ուղղության և «մոզական ռեալիզմի» որոշ գործեր, որոնք թեև գերակա չեն դարձել զիջելով սոցիալական ու քաղաքական խնդիրներին վերաբերող արձակին, սակայն, այնուամենայնիվ, որոշակի հենք են դարձել գրական հետագա զարգացումների և հատկապես պոստմոդեռնիզմի կայացման համար:

2. 1970-ականների վերջին և 1980-ականներին թուրքական արձակում նկատվում են պոստմոդեռնիզմի հանդեպ հետաքրքրության առաջին դրսևորումները, որոնք թուրքական գրականագիտության կողմից թյուրիմացաբար բնորոշվում են որպես մոդեռնիստական, այնուհետև՝ ուշ մոդեռնիստական, և միայն 1990-ականներին սկսում են կիրառել պոստմոդեռնիզմ տերմինը: Այդ ուղղության ձևավորման համար կարևոր ազդակներ են թուրքիայում արևմտականացման ավանդական հակումները և արևմտյան գրականության թարգմանություններն ու որոշ թուրք գրողների վերապատրաստումն արևմուտքում:

3. Թուրքական գրականության մեջ պոստմոդեռնիզմի ուղղության ձևավորման և կայացման հարցում անվիճելիորեն մեծ է Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուքի դերը, որն իր ստեղծագործություններում կարողացել է պոստմոդեռնիստական գրականության առանձնահատկությունները ներկայացնել տեղայնացված՝ արևելյան մոտիվներով:

4. Օրհան Փամուքի պոստմոդեռնիստական արձակը 1980-1990-ական թվականներին անցել է զարգացման բավական արագ ուղի և, սկսած այդ ժամանակվանից, որոշակի տեղ է գրավել համաշխարհային պոստմոդեռնիստական ուղղության մեջ: Փամուքի գրականության թեմատիկ տեսադաշտը բավական լայն է, և նա գեղարվեստի նյութ է դարձնում ինչպես անհատների այլաբանական փնտրտուքը, այնպես էլ քաղաքական իրադարձությունները, հասարակական կարևոր թեմաները, առասպելները, արևելյան արվեստի ոճերը և այլն:

5. Օրհան Փամուքն իր արձակի առանցքն է դարձրել անձի ինքնության փնտրտուքի գաղափարը, սակայն կարողացել է դա այլաբանորեն տեղափոխել ավելի լայն հարթություն՝ վերածելով Արևելք-Արևմուտք հարաբերությունների խնդրի:

6. Օրհան Փամուքի արձակում աչքի են զարնում թուրքական շեշտադրումները՝ սկսած աշխարհագրական միջավայրից՝ Օսմանյան կայսրություն կամ Թուրքիայի Հանրապետություն, մինչ ավանդույթ, կենցաղավարություն և պատմություն: Դա թույլ է տալիս որոշ գրականագետների Փամուքի գրականությունն անվանել «ազգային պոստմոդեռնիզմ», որտեղ գերիշխում են թուրքական տարրերը:

7. Փամուքի ավելի վաղ շրջանի վեպերին հատուկ են երբեմն անհարկի մեծածավալությունը, ինտելեկտուալ շանտաժը, հերոսների փոխկապակցվածության և սյուժետային գծի կտրտվածությունը: Ձգտելով ավելի քառտիկ պատկերների՝ նա երբեմն իրոք հասնում է ծայրահեղության: Գրողի լեզվական և մտքային խրթին ձևակերպումները որոշակի էվոյուցիա են ապրում, և ի համեմատություն նրա վաղ շրջանի վեպերի՝ հետգիտետ նկատվում է առավել պարզություն: Այս ամենը, կարծում ենք, նաև սկսնակ գրողի ավելորդ ճիգի և պոստմոդեռնիստական գրականության «քառտիկ լաբիրինթոսում» արդեն հմտացած գրողի արհեստավարժությունից է բխում:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքները

1. Հետմոդեռնիստական առանձնահատկությունների դրսևորումը Օրհան Փամուքի «Սև գիրքը» վեպում, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2013, հատոր 8, էջ 229-236:
2. Թուրքական հետմոդեռնիստական արձակի ձևավորման հարցի շուրջ, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2015, հատոր 9, էջ 377-388:
3. Ճակատագրապաշտության և առասպելների համադրումը Օրհան Փամուքի «Կարմիր Մագերով Կինը» (2016 թ.) վեպում, Հայագիտության հարցեր, Երևան, 2016, թիվ 1 (7), էջ 105-116:
4. Օրհան Փամուքի «Ջնդեթ բեյը և որդիները» վեպը որպես «նախապոստմոդեռնիզմի» օրինակ, ԵՊՀ ՈւԳՆ գիտական հոդվածների ժողովածու 2.5 (15), Երևան, 2016, էջ 36-40:
5. Քաղաքական իսլամի խորհրդանշի պոստմոդեռնիստական արծարծումը Օրհան Փամուքի «Ջյուն» վեպում, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2016, հատոր 11, էջ 185-192:

СААКЯН ГЕВОРГ АРТУРОВИЧ

ОСОБЕННОСТИ СТАНОВЛЕНИЯ И РАЗВИТИЯ ПОСТМОДЕРНИЗМА В
ПРОЗЕ ТУРЕЦКОГО ПИСАТЕЛЯ ОРХАНА ПАМУКА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.07 – “Зарубежная литература”.

Защита состоится 27-ого мая 2016 г., в 12:30 часов на заседании специализированного совета 003 Армянской и зарубежной литературы, действующего в Институте литературы имени М. Авегяна НАН РА, Адрес: г. Ереван, ул. Г. Лусаворич, 15.

РЕЗЮМЕ

В настоящее время принято называть “постмодернистскими” разные явления, имеющие место в общественно-политической жизни, искусстве, литературе, и даже распространен термин “состояние постмодерна”. Современная турецкая литература занимает определенную нишу в мировой “постмодернистской литературе”, и в этом вопросе значительна роль писателя-прозаика Орхана Памука. Проза Орхана Памука, получившего в 2006 году Нобелевскую премию в области литературы, сыграла важную роль в формировании и развитии направления постмодернизма в турецкой литературе. Считаю не лишним отметить, что в биографии и в истории прославления Памука отнюдь не второстепенно значение его заявления о Геноциде Армян.

Данная диссертация посвящена изучению прозы Орхана Памука, сделана попытка представить особенности формирования и развития турецкого постмодернизма. В прозе Памука принципы постмодернизма мастерски переплетены с определенными восточными реалиями и особенностями, что позволяет автору локализовать элементы постмодернизма и создать особенную «восточную» или “турецкую» постмодернистскую литературу, вобравшую в себя средневековый исламский

мистицизм, общественно-политические события Турции, поиск своего «я» и получившее аллегорический окрас столкновение Запад-Восток в глобальном смысле.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы.

В введении представлены актуальность, цель, задачи, научная новизна, практическая значимость диссертации и дается подробная теория использованной литературы.

Первая глава «Основные тенденции в турецкой прозе второй половины 20-го века и формирование направления постмодернизма» состоит из двух подглав. В первой подглаве «Турецкая проза во второй половине 20-го века: общий обзор» представлены основные тематические и жанровые особенности турецкой прозы с середины прошлого столетия до 1980-ых годов. Во второй подглаве «Процесс формирования и некоторые особенности направления постмодернизма» представлены литературные процессы конца 1970-ых начала 1980-ых, ставшие основой формирования постмодернизма в Турции.

Вторая глава «Орхан Памук и первое десятилетие его литературного творчества: от «предпостмодернизма» к «классическому постмодернизму» состоит из трех подглав. В первой «Орхан Памук: путь к литературной и общественной славе» представлены важные моменты биографии писателя, которые стали основой формирования всемирно известной личности. Во второй подглаве «Роман Орхана Памука «Джевет бей и сыновья»: первые признаки постмодернизма» представлен первый роман Памука, в котором очевидны присущие постмодернизму элементы. Третья подглава «Хаотическая среда и мистические поиски в романе «Черная книга» посвящена анализу суфийского, аллегорического поиска,

описываемого, наверное, в первом полностью постмодернистском и удавшемся Орхана Памука.

Третья глава “Поиск идентичности в политической, биографической и фаталистической плоскостях” также состоит из трех подглав, в первой из которых «Постмодернистское представление общественно-политических событий в романе Орхана Памука “Снег” анализируется первый и единственный, по словам самого писателя, политический роман, в котором отражены самые насущные вопросы турецкой общественно-политической жизни 1990-ых годов. Вторая подглава “Постмодернистская мемуаристика Орхана Памука: город Стамбул и воспоминания” посвящена к до сих пор единственной опубликованной в жанре мемуаров книге Памука, в которой автор представляет некоторые моменты своей жизни. В третьей “Фатализм и сопоставление мифов в романе Орхана Памука “Рыжеволосая женщина” (2016 год) на основе смешения классической восточной легенды “Ростам и Зохраб” и западной трагедии Софокла “Царь Эдип” и трансформации имеющихся в них мотивов представлена проблема отцов и детей.

В конце диссертация обобщена и представлены выводы.

Sahakyan Gevorg
**Peculiarities of the Formation and the Development of Postmodernism in the
Prose of Turkish Author Orhan Pamuk**

The Dissertation to obtain the Candidate of Philological Sciences with the specialty of 10.01.07 chipper – “Foreign Literature”. The public defense of the dissertation will take place on May 27, 2016 at 12:30 in specialized Council 003 of “Armenian and Foreign Literature” at the Institute for Literature of National Academy of Sciences after M. Abeghyan NAS RA. Address: 15, Grigor Lusavorich Street, Yerevan

Summary

Nowadays, the term “post-modernistic” is used to describe number of different phenomena present in current socio-political life, art and literature. Moreover, the term “post-modern condition” is widely used and popular. Modern Turkish literature has its particular place in the world's postmodern literature and the role of the novelist Orhan Pamuk is very distinct. The prose of Orhan Pamuk, who receive The Nobel Prize in Literature in 2006, played a substantive role in the formation and development of post-modernistic stands in Turkish literature. It is noteworthy to mention that the role of the statement on Armenian genocide made by Pamuk is an integral part of his biography and popularity.

The current dissertation is dedicated to the examination of Orhan Pamuk's prose and with the means of which, an attempt was made to demonstrate the peculiarities of the formation and the development of Turkish post-modernism. In Pamuk's prose, post-modernistic principles are ably intertwined with some phenomena and features peculiar for eastern cultures, which enabled the author to localize post-modernistic elements and form unique “eastern” or “Turkish” post-modern literature. The latter includes medieval Islamic mysticism, Turkish socio-political events, the search for individual's identity and the clash of the East and the West in global sense with allegorical overtones.

The dissertation consists of the introduction, three chapters, the conclusion and the references.

In the introduction the urgency, the purpose, the tasks, scientific novelty, and the practical importance of the dissertation are presented. In addition, the detailed theory of used literature is given.

Chapter 1 entitled as “The central tendencies of the mid-20th century Turkish prose and the formation of post-modern strand” consists of two subchapters. In the first subchapter, “The Turkish literature in the second half of the 20th century: overview” presents the main developments, thematic and genre characteristics of Turkish prose starting from mid-20th century to 1980s. The second subchapter, “The process of formation of post-modern strand and some peculiarities”, introduce those literary developments that were taking place in late 1970s to early 1980s’ Turkey. These developments are considered the basis for the formation of post-modernism.

Chapter 2 entitled as “Orhan Pamuk and the first decade of his literary activity: From “pre-postmodernism” to “classic postmodernism”, consists of three subchapters. The first subchapter, “Orhan Pamuk: the course of literary and public recognition” presents those important events of the author’s biography, which played an important role in the formation of the world-known character. The second subchapter, “Cevdet Bey and his sons by Orhan Pamuk: the first signs of postmodernism”, analyzes the first novel by Pamuk, which already consisted such elements that would be inherent for the postmodern strand. The third chapter, “The chaotic environment and mystical quest in the novel “The black book””, is dedicated to the analysis of the sufi, allegorical quest found in Orhan Pamuk’s perhaps first entirely postmodern novel which had success.

Chapter 3 entitled as “The search for the individual’s identity in the political, biographic and fatalistic contexts”, also consists of three subchapters.

The first chapter, “Post-modernistic view of socio-political events in the novel “Snow” by Orhan Pamuk” presents “the first and only political novel” as stated by the author himself, and which reflects the most crucial themes of socio-political life of Turkey in 1990s. In the second subchapter, “Postmodern memoirs of Orhan Pamuk on Istanbul: the city and the memories”, reflects on the only published book in the genre of memoir, where the author presents some events from his life. The third subchapter, “The combination of fatalism and myths in Orhan Pamuk’s novel “The Red-Haired Woman (2016)” and represent the topic of fathers and sons in the context of combination of classic and popular eastern myth of Rostam and Sohrab’s components and western tragedy by Sophocles Oedipus the King, by transforming the existing motives in the works.

At the end, the dissertation is generalized and conclusions are presented.